

Հայ Աւետարանական Եկեղեցիին Վարդապետական առանձնայատկութիւնները

ՊԱՐԳԵՒ Ն. ՏԱՐԱԳՃԵԱՆ

ՆԵՐԱՄԱԿԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՒ ԲՆՈՅԹՆ ՈՒ ԳՈՅԱՌՈՒՄԻ ԱԶԴԱԿՆԵՐԸ

Հայ Աւետարանական առաջին եկեղեցին կազմուեցաւ 1 Յուլիսի, 1846 թ.ին: Հայ Աւետարանական եւ Եկեղեցի բառերը բնորոշիչ տարրերը դարձան ԺԹ. դարու առաջին կիսուն դոյութիւն առնող այս Հայ կրօնական հաւաքականութեան: Հայ էր, քանի որ Հայ ժողովուրդին մէջ, Հայ ժողովուրդին համար ու Հայ ժողովուրդով ծնաւ, զարգացաւ ու ծառայեց: Աւետարանական էր, քանի որ Աւետարանը՝ իբրեւ կանոն հաւատքի եւ կեանքի՝ գերադաս համարեց քան եկեղեցական աւանդութիւնները ու հաստատուած կարգ ու սարքը: Եկեղեցի էր, քանի որ ան կ'ամբողջացնէր Աւետարանի մէջ նկարագրուած Եկեղեցիին բոլոր պայմանները: Ասիկա կ'ենթադրէր հրատարիլ այն բոլոր աւանդութիւններէն, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպերով արդելք կը դառնային Եկեղեցիի քրիստոսական առաքելութեան ազդու գործադրութեան:

Այս ուսումնասիրութեան նպատակը չէ Աւետարանական վարդապետութեան ուղիղ կամ վաւերական ըլլալը հաստատել: Հապայոյց տալ վարդապետական այն տարբերութիւնները, որոնք կը բաժնեն զայն Հայ Առաքելական Եկեղեցիէն:

ինչպէս ամէն յեղաշրջական շարժում, Հայ Աւետարանական նութիւնը, իբրեւ բարեպաշտական եւ բարեկարգչական շարժում՝ ծնունդ առաւ տիրող պայմաններու իբրեւ հակազդեցութիւն:

Ուրեմն՝ այս ներածականին մէջ արագօրէն թուենք ֆական պատճառները Աւետարանական եկեղեցիին գոյութեան դալուն՝ առանց մտնելու հակաճառութեանց կալուածէն ներս: Հետեւեալ կէտերը նկատի առնուելու են ռեւէ պատմաբանի կողմէ, որ կ'ուզէ զլտական մեթոտով եւ անաչառութեամբ մօտենալ պատմական այս դէպքին:

ՀԵՌԱԿԱՍԵ ԿԱՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1. Հայ եկեղեցիէն ներս դարերու ընթացքին զգացուած է բարեկարգութեան կարիքը: Զայնք բարձրացած եւ փորձեր կատարուած են այդ ուղղութեամբ, սակայն անոնք ճախողութեան դատապարտուած են:

2. ԺԶ. դարու եկեղեցական բարեկարգութեան, ու ապա ԺԸ. եւ ԺԹ. դարերուն Անդլիոյ եւ Ամերիկայի մէջ հոգեւոր արթնութիւններու ստեղծած ընդհանուր մթնոլորտը:

3. Թուրքիոյ որդեգրած ազատական քաղաքականութիւնը ու դէպի Արեւմուտք լուսամտներու բացումը:

4. Արեւմտեան պետութիւններու՝ յատկապէս Անդլիոյ՝ եւ Ռուսիոյ շահերու խաչաձեւումը Օսմանեան «Հիւանդ Մարդ»ուն շուրջ:

5. Հայ Առաքելական Եկեղեցիի Աթոռներուն՝ էջմիածինի, Երուսաղէմի ու յատկապէս Կ. Պոլսոյ հոգեւոր վիճակի վատթարացումը վերջին քանի մը դարերու ընթացքին:

6. Աստուածաշունչի հրատարակութեան եւ տարածումին նուիրուած Ռուսական, Անդլիական եւ Ամերիկեան Ընկերութիւններու տենդագին աշխատանքը՝ ժողովուրդներու հասկցած լեզուներով - ի միջի այլոց հայերէն գրաբար, հայատառ թրքերէն ու հայերէն աշխարհաբար լեզուներով - Սուրբ Գիրք հրատարակելու եւ տարածելու:

ՈՒՂՂԱԿԻ ԿԱՄ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1. Կ. Պոլսոյ Պատրիարքարանին կից հաստատուած Փէշտիմալճեանի ճեմարանին մէջ յառաջ եկած հոգեւոր հետաքրքրութիւնը եւ արթնութիւնը իբր հետեւանք Աստուածաշունչի սերտողութեան:

2. Ճեմարանականներու եւ ուսուցիչներու հոգեւոր խանդն ու եռանդը՝ Աւետարանի պատգամը տարածելու ժողովուրդին մէջ, ու «Քարեպաշտական Միաբանութիւն» անունով ընկերութեան մը ծնունդը:

3. Միսիոնարներու ժամանումը Կ. Պոլիս: Ամերիկայի մէջ տարիներ տեւող հոգեւոր արթնութիւններու հետեւանքով քանի մը երիտասարդներ նախաձեռնարկ կ'ըլլան միսիոնարական ընկերութեան մը կազմութեան: Նպատակ՝ Ամբողջ աշխարհը Քրիստոսի ու Անոր Աւետարանին շահիլ: Ծայր աստիճան պահպանողական եւ բարկաշտական աստուածաբանութեան ծնունդը ըլլալով, Ընկերութեան անդամները համոզուած էին թէ Քրիստոս վերստին պիտի չգար մինչեւ որ աշխարհի բոլոր ժողովուրդները քրիստոնէութեան լոյսը չընդունէին: Եկեղեցավարական տեսակէտով անոնք վերապահութիւններ եւ նախապաշարումներ ունէին կղերապետական, նուիրապետական ու ծիսապաշտական դրութիւններու դէմ: Անոնք Աւետարանը քարոզեցին հեռաւոր Ասիայէն մինչեւ Մերձաւոր Արեւելեան երկիրներ:

4. Միսիոնարները չկրցան ըմբռնել հայ եկեղեցիին առանձնայատուկ պատմութիւնը, դոյալիճակը եւ դերը հայ ժողովուրդին կեանքին մէջ: Ծայրայեղ տարրեր նոյնիսկ արհամարհական ոգի ցուցաբերեցին՝ ինչ որ մեծ զայրոյթ յառաջ բերաւ պատրիարքական շրջանակներու մէջ:

5. Հայ Կաթողիկէ համայնքի մը անջատ ժողովրդապետութեամբ հաստատուիլը Կ. Պոլիս, 1831 թ.ին, աւելի զգայուն դարձուց հայ պատրիարքութիւնը՝ միսիոնարութեան ընծայած հոգեւոր եւ կրթական ծառայութիւններուն նկատմամբ:

6. Մէկ կողմէն Ռուսիոյ եւ Անգլիոյ մրցակցութիւնը, իսկ միւս կողմէն՝ կաթողիկէ իշխանութիւններու հակակրանքը բողոքական միսիոնարութեան դէմ, ու տակաւին՝ ծայրայեղ բարեպաշտականներու անխորհուրդ արտայայտութիւնները յառաջ բերին անբաղձալի կացութիւն մը:

7. Զուխաճեան Մատթէոս Պատրիարք, մէկ կողմէն անձնական շահու գծով, իսկ միւս կողմէն Ռուսիոյ կառավարութեան կողմէ իջմիածինի Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսին միջոցով տրուած հրահանգներուն ընդառաջելով, ձեռնարկեց հալածանքի, նզովքի եւ արտաքսումի քաղաքականութեան՝ այն բոլորին դէմ, որոնք բողոքական միսիոնարութեան հետ կապ ունէին այս կամ այն կերպով:

8. Թուրքիոյ մէջ «միլլէթ»ի դրութիւնը եղաւ անջատումի մեծ ազդակ մը, որով Կ. Պոլսոյ պատրիարքին անձին ու աթոռին

վրայ կը կեդրոնանար ամբողջ հայ ժողովուրդին ազգային, եկեղեցական, կրթական, հասարակական, առևտրական եւ քաղաքացիական կեանքն ու դործունէութիւնը: Հետեւաբար հայ եկեղեցիէն արտաքսուելի կը նշանակէր հայ ժողովուրդէն կամ ազգէն անջատուել՝ յաչս օսմանեան պետութեան:

9. Վերջին կէտ մը՝ որ ընդհանրական ընոյթ ունի, հայ ժողովուրդին՝ դաստիարակութեան եւ լուսաւորութեան նկատմամբ ունեցած բնական փափաքն ու ընդունակութիւնն է: Հայը իր իմացական եւ զրացական ընդունակութիւններով եւ ձգտումներով միշտ դտնուած է յառաջապահ դիրքերու վրայ ու ջահակիրք դարձած է նոր զաղափարախօսութիւններու եւ շարժումներու:

Կը խորհինք թէ այս ազդակները առաւել կամ նուազ չափով պատճառ դարձած են Հայ Աւետարանական Եկեղեցիի անջատ գոյութեան: Կրնանք հաստատել թէ կրօնականին կողքին կարեւոր դեր ունեցած են աշխարհագրական, քաղաքական, ընկերաբանական, կրթական, տնտեսական եւ ազգային-բնախօսական ազդակներ:

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Որպէսզի կարենանք շիտակ ուղիին մէջ մնալ ու յստակ կերպով ներկայացնել մեր առած նիւթը, պէտք է գիտնանք իմաստը դաւանութեան եւ վարդապետութեան, ինչպէս նաեւ տարբերութիւնը այս երկուքին: Ասիկա կարեւոր է, որովհետեւ հայ իրակաւորութեան մէջ դաւանափոխ կը կոչեն Առաքելական Եկեղեցիէն զատուելով Կաթողիկէ կամ Աւետարանական Եկեղեցիին միացողը, ինչ որ կը մատնանշէ թիւրիմացութիւն մը դաւանութիւն բառին շուրջ:

Դաւանիլ բառը նոր Կտակարանի մէջ միշտ գործածուած է վկայել, ընդունիլ, խոստովանիլ ու յայտարարել իմաստներով: Այսպէս՝ «Ով որ մարդոց առջեւ զիս կը դաւանի...» (Մատթ. Ժ. 32). «Եւ ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է...» (Փիլ. Բ. 11). «Վասնզի եթէ ջու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս...» (Հռովմ. Ժ. 9): (Յունարէն բնագիրին մէջ հովտօլիէ՛յսէյս է որ նաեւ դաւանի կը նշանակէ: Յունարէն այս նոյն բառն է, հովտօլիէօ, որ կը գործածուի նաեւ վերի համարներուն մէջ՝ դաւանիլին համար):

Ինչպէս կը տեսնուի վերի համարներուն մէջ, դաւանութիւնը Յիսուսը Տէր, եւ Փրկիչ ըլլալը ընդունիլն ու վկայելն է: Աւելի կարեւորը այն է թէ ով որ այս դաւանութիւնը ընէ, պիտի փրկուի (Հռովմ. Ժ. 9): Այս դաւանութեան մղիչ ոյժը հաւատքն է, հաւատք Յիսուսի Տէր, Փրկիչ, Աստուծոյ Որդի եւ մեռելներէն յարութիւն առած ըլլալուն:

Հարկ չկայ ըսելու՝ թէ քրիստոնեայ բոլոր եկեղեցիները ունին այս նոյն դաւանութիւնը Յիսուսի մասին: Հետեւաբար մէկը դաւանափոխ կ'ըլլայ եթէ միայն մերժէ Յիսուսի Որդի Աստուծոյ, Տէր եւ Փրկիչ ըլլալը եւ անոր յարութիւնը, որոնք փրկութեան համար անհրաժեշտ են:

Վարդապետութիւնը ուսուցում է, եւ բովանդակութիւնը ուսուցումածին: Մինչ դաւանութեան մէջ հաւատքն է կենսականը եւ որ Աստուծոյ կողմէ կը տրուի մարդուն, վարդապետութեան մէջ իմացականութիւնն է որ գործի կը լծուի: «Դաւանութիւն Սուրբ Գիրքէն քաղուած եզրակացութիւն եւ ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն է, յստակ եւ որոշ բառերով», կ'ըսէ Օրմանեան Պատրիարք: «Վարդապետութիւնն ալ», կը շարունակէ ան, «նմանապէս Սուրբ Գիրքէն քաղուած եւ ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն մըն է, որ պէտք է միշտ յստակ ըլլայ եւ աւանդութեան մը հետեւողութեամբ հաստատուի, որով իբր ողջամիտ եւ ճշմարիտ կամ ճշմարտանման սկզբունք կրնայ ընդունելի ըլլալ, բայց երբեք բացարձակ կերպով հաւատացուելու հարկ չի պարունակեր, եւ չընդունուած աստե՛ն եկեղեցւոյ ծոցէն մերժուած ըլլալու հետեւանքը չ'արտադրեր»: (1)

Նոյն էջին վրայ սակայն Օրմանեան, դաւանութիւնը կը նկատէ «եկեղեցւոյ հեղինակութեամբ զօրացած ճշմարտութիւն» մը: Մինչդեռ եթէ դաւանութիւն մը Աւետարանէն «քաղուած» է իր եղած վիճակին մէջ, պէտք չունի եկեղեցիին հեղինակութեան: Աւետարանը գերագոյն հեղինակութիւնն է եւ պէտք չունի եկեղեցիին հեղինակութեան՝ ճշմարտութիւն նկատուելու համար: Միւս կողմէն, շիտակ դանազանութիւն մը կ'ընէ դաւանութեան եւ վարդապետութեան միջեւ երբ կը գրէ:— «Դաւանութիւնը կը պատկանի հաւատքին եւ կրօնքին, վարդապետութիւնը կը պատկանի ուսման եւ աստուածաբանութեան»: (2)

Եզրակացութիւնը բառերու այս սահմանումին, այն է թէ քրիստոնեայ բոլոր եկեղեցիները ունին մէկ դաւանութիւն, այսինքն՝ վկայութիւն, որ անզանցառելի է ու անփոփոխելի: Այս դաւանութիւնը Աւետարանէն քաղուած է եւ հաւատքով ընդունուած: Յիսուս Քրիստոս Տէր է, Որդի Աստուծոյ, որ աշխարհ գալով մարդոց մեղքերուն համար խաչին վրայ մեռած է: Սակայն յարութիւն առած՝ ու երկինք համբառնալով նստած է Հօր Աստուծոյ աջ կող-

1) Օրմանեան, Հայոց եկեղեցին, Պէյրութ 1961, էջ 89:

2) Նոյնը:

մը: Ան վերստին պիտի դայ փառքով, դատելու կենդանիներն ու մեռեալները: (3)

Եկեղեցիներ՝ ընդունելով հանդերձ հաւատքի այս դաւանութիւնը, ունին իրենց ուրոյն աստուածաբանութիւնը եւ վարդապետութիւնները, որոնք հիմնուած են «տիեզերական ժողովներու բանաձեւած հանդանակներու (հին կամ ծիսական եկեղեցիներու պարագային) եւ կամ, հեղինակաւոր աստուածաբաններու Ս. Գրային մեկնաբանութեանց ու անհատներու փորձառութիւններուն (բողոքական կամ նոր եկեղեցիներ) վրայ: Այս վարդապետութիւնները ազդեցութիւններ կը կրեն նաեւ տեղական մշակոյթէն, քաղաքական եւ ընկերային փիլիսոփայութիւններէն, ընկերային յեղաշրջումներէն, լեզուի զարգացումէն, գիտական տեսութիւններէն եւ իրազոր-ծումներէն եւ որոշ չափով ենթակայական փորձառութիւններ են:

Դաւանանքի ու վարդապետութեան միջեւ եղած տարբերութեան մասին տրուած այս բացատրութիւնները պիտի օգնեն ճշգրիտ կերպով ըմբռնելու Աւետարանական Շարժումը եւ անոր աստուածաբանական ու վարդապետական առանձնայատկութիւնները:

ՎԱՂ ՇՐՋԱՆԻ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ. Պոլսոյ «Աւետարանականներ»ը իրենց հաւատքի առաջին հանդանակը հրատարակեցին 14 Յունուարի 1846-ին, երբ տակաւին պաշտօնապէս դոյուլթիւն չունէր Աւետարանական եկեղեցի կամ Համայնք: (4) Անոնք այս միջոցին դիմեցին ոչ թէ ապստամբելու պատրիարքին դէմ, հապա մէկ կողմէն ջատագովելու իրենց դիրքը, իսկ միւս կողմէն՝ բողոքելու պատրիարքին՝ իրենց դէմ արձակած բանադրանքին, նզովքին եւ զիրենք իբրեւ հերետիկոս ամբաստանելուն դէմ: Արդարեւ Մատթէոս Պատրիարք իր 12 Յունուարի 1846 թ.ի կատարած պաշտօնական յայտարարութեամբ կը նզովէր

3) Տես՝ Գործք Առք. Բ. 14-42, Ժ. 34-43: Հռովմ. Ժ. 9-13: Ա. Կորնթ. ԺԾ. : Փիլ. Բ. 5-12:

4) The Missionary Herald, XLII (June, 1846), p. 194. Վեր. Ս. Իւրիւմեմ իր Եւզումն եւ Ընթացք Աւետարանականութեան ի Հայս գիրքին մէջ (Կ. Պոլիս, 1914), ամբողջութեամբ դրած է հաւատքի այս յայտարարութիւնը, սակայն թուականը 22 Յունուարի է, փոխանակ 14 Յունուարի. տես նոյնը, էջ 160):

բոլոր «Աւետարանականներ»ը: (5) Հետեւաբար՝ «Աւետարանականներ», յայտարարելով իրենց հաւատքի հանդանակը, կ'ուզէին ապացուցանել թէ իրենք հերետիկոս չեն:

«Հալածեալք քրիստոնեայքս» ստորագրութիւնը կրող այս յայտարարութիւնը կը սկսի պատրիարքին ուղղուած բողոքով՝ քանի որ «հալածանք, զրկողութիւն, զրպարտութիւն եւ եղած վնասներ» ստիպած էին զանոնք զրկու այդ նամակը: Թշնամի ներկայացուելով յաշտ աղզին՝ անոնք զրկուած էին եկեղեցիի արտօնութիւններէն: Այս բոլորին հետ մէկտեղ, անոնք իբրեւ հերետիկոս ամբաստանուելով՝ նովիքի ու բանադրանքի կ'ենթարկուէին ու այս պատճառով իսկ կը պարտաւորուէին ապացուցանել իրենց ճշմարիտ հաւատացեալ ըլլալը: Յայտարարութիւնը սպա կը շարունակէ՝

«Մենք կը հաւատանք եւ կը խոստովանինք Ամենասուրբ Երրորդութեան եւ միոյ Աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, մի տէրութիւն՝ մի կամք՝ մի իշխանութիւն:

«Կը հաւատանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի՝ որ է կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ, եւ կը դաւանինք զանիկա մի միայն Փրկիչ աշխարհի եւ ճշմարիտ Քահանայապետ եւ միջնորդ ու բարեխօս հաւատացելոց եւ գլուխ եկեղեցիին, որ եւ ինքը պիտի գայ դատելու կենդանիները եւ մեռելակերպը, եւ արդարութեամբ հատուցանելու՝ արդարոց կեանք յաւիտեանական եւ մեղաւորաց տանջանք յաւիտեանական:

«Մենք կը հաւատանք Հոգւոյն Սրբոյ՝ որ է անեղծ եւ կատարեալ Աստուած եւ ազրիւր նշմարտութեան, որ խօսեցաւ օրէնքներով, Մարգարէներով եւ Սուրբ Աւետարանով, որ եւ ինքն է առաջնորդ եւ միջնորդ քրիստոնէից:

«Կը հաւատանք Աստուածաշունչ Սուրբ Գրոց Հին եւ Նոր կտակարաններուն՝ որ է կատարեալ կանոն եկեղեցւոյ, եւ անոր մէջ պարունակուած ամէն վարդապետութիւններ, կանոններ եւ խորհուրդներ կ'ընդունինք բոլորով սրտի...:

«Կը դաւանինք թէ մեզի համար քրիստոսադիր պարտաւորութիւն մըն է մկրտութիւնը յանուն Հօր՝ եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ինչպէս նաեւ հաղորդութիւնը ըստ սահմանադրութեան փրկչին մերոյ իր կենարար մահը յիշատակելու համար: Որպէս պատուիրեց, «Ձայս արասցիք առ իմոյ յիշատակի»:

5) Նոյնը, էջ 106 եւ շար.:

«... Կը խոստովանիմք որ մեր հաւատքը Եկեղեցւոյն ընդունած Ս. Աւետարանին ուսուցած հաւատքն է, *ինչպէս Նիկիական Հանդանակն ալ Աւետարանին Համաձայն ըլլալով՝ անիկա ընդունելովնիս ալ մեր հաւատքին ուղղափառութիւնը կը յայտնենք զրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյն դաւանութեան համեմատ :*

«Եւ արդ՝ որ մենք կը խոստովանիմք պատշաճապէս թէ մեր հաւատքը Ս. Գիրքին ստրկեցուցածն է, ինչպէս որ այնպէս ըլլալ արժած է եւ իրաւ, ի՞նչպէս կրնանք ընդունիլ այն պահանջմունքները, որ Ս. Դրոց կանոնին հակառակ են, եւ բացարձակապէս արգիւտած են նգովքով : ...

«Մնամք Ամենապատիւ Տէրութեանդ
բարեմաղթու ծառայք՝
հալածեալք քրիստոնեայքս»

1846 Յունուար 22

Որպէսզի ընթերցողներ կարենան յստակ եւ բաղդատական պատկեր մը ունենալ, հարկ կը տեսնենք հոս արտագրել Նիկիական Հանդանակը, որ Դ. դարուն հաստատուած է Տիեզերական Ժողովներու կողմէ եւ պաշտօնական հաւատամքը դարձած ընդհանրական եկեղեցիի :

«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարբիչն երկնի եւ երկրի, երեսելեաց եւ աներեսոյցից :

«Եւ ի մի Տէր Յիսուս-Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծընեալն յԱստուծոյ հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած մշմարիտ յԱստուծոյ մշմարտէ ծնունդ եւ ո՛չ արարած : Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս եւ ի վերայ երկրի, երեսելիք եւ աներեսոյցիք : Որ յազագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով : Որով էաւ մարմին, հոգի եւ միտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ մշմարտապէս եւ ո՛չ կարծեօք : Զարչարեալ, լաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել գկեցեալնիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան :

«Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատար-

եալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս,
որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալսն եւ բնակեցաւ ի
Սուրբսն :

«Հուստամբ եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքեալ-
կան Սուրբ Եկեղեցի .

ի մի Մկրտութիւն,

յԱպաշխարութիւն,

ի Քաւութիւն եւ ի Թողութիւն մեղաց,

ի Յարութիւն մեռելոց,

ի Դատաստանն յաւիտեանից հոգւոց եւ մարմնոց,

յԱրքայութիւն երկնից

եւ ի կեանն յաւիտեանականս :

«Իսկ որք ասեն՝ է՛ր երբեմն յարժամ ո՛չ էր Որդին, կամ
է՛ր երբեմն յարժամ ո՛չ էր Սուրբ Հոգին, կամ յոչ էից եղեն
կամ յայլմէ էութեան ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ
զՍուրբ Հոգին, եւ թէ՛ փոփոխելիք են կամ այլայլելիք, գայն-
պիսիսն նգովէ Կաթողիկէ եւ Առաքեալական Սուրբ Եկեղեցի :

Իսկ մեք փառաբանեցուք որ յառաջ քան գլխաւորեանս,
երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեան եւ մի Աստուածու-
թեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտեանից. Ամէն : (6)

*Ինչպէս յայտարարութենէն կը յայտնուի, Նիկիական այս
հանգանակը ընդունած են Բարեպաշտից Միաբանութեան անդամ-
ները, որոնք նաեւ կոչուած են «Բողոքական» կամ «Աւետարանա-
կան», տակաւին Աւետարանական պաշտօնական Եկեղեցին ծնունդ
չառած : Նիկիական հանգանակը ուղղակի Աստուածաշունչին վրայ
հիմնուած հաւատքի դաւանութիւն է, որով Հայ Աւետարանակա-
նութեան նախակարգայեաները կ'ապացուցանեն թէ՛ դաւանական
զետնի վրայ ոչ մէկ տարբերութիւն ունէին Մայր Եկեղեցիէն : Ար-
դարեւ անոնց նախնական յայտարարութեան մէջ ոչի՛նչ կայ ժխտող
կամ հակասող Նիկիական հանգանակի կէտերը, այն հանգանակին,
որ Մայր Եկեղեցիի պաշտօնական հաւատքի դաւանութիւնն է : Հա-*

6) Բարգէն Կաթողիկոս, *Քրիստոնէական, Ամբիլիաս, էջ 15*. (Մանօք-
Երկրորդ յաւելումը, կ'ըսուի թէ, Գրիգոր Լուսարարի ի՛նք կատարած է :
Պ. Ն. Տ.) :

կառակ այս իրողութեան սակայն, ինչ ինչ պատճառներով անբաղ-
ձալի մթնոլորտ մը ստեղծուեցաւ երկու կողմերուն որդեգրած դիր-
քին պատճառով:

Որպէսզի կարենանք աչքի առաջ ունենալ երկուստեք դիրքե-
րու կարծրացման արդիւնք եղող ու իրարու հակադրուած այդ եր-
կու հանդանակները, կ'արժէ որ յաջորդաբար ներկայացնենք զա-
նոնք, ու ապա վեր առնենք առանձնապէս՝ վիճելի կէտերը: Ասոնցմէ
առաջինը հրապարակուած է Մատթէոս Պատրիարքին կողմէ ու
տրուած տաներէց քահանաներուն, որպէսզի անոնք ստորագրել տան
զայն անոնց, որոնք ընդունել էին «նորազանդ խարերայից մուլար
քարողութիւնները» բայց զղջալով կ'ուզէին վերադառնալ «անարատ
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն զիրկը...»: (7)

ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐԻ «ՆՈՐ ԴԱԻԱՆԱԳԻՐԸ» —

1. Կը խոստովանի՞ս եւ կ'ընդունի՞ս որ միայն հաւատ-
քը մարդս չկրնար փրկել, այլ հաւատքին հետ բարեգործու-
թիւնն ալ պիտի պէտք ըլլայ, եւ քրիստոնէի մը ուրիշ հա-
ւատք ունենալու նշան՝ բարի գործեր չեն, այլ ընդհանուր ե-
կեղեցւոյ հաւատացածին համաձայն դաւանութիւն տալն է:

2. Կը խոստովանի՞ս եւ կ'ընդունի՞ս որ Քրիստոսի ե-
կեղեցին այս աշխարհիս մէջ իրենց հաւատքը յայտնի դաւա-
նոզ եւ չծածկոզ հաւատացելոց տեսանելի միութիւնն է՝ որ
զինուորեալ եկեղեցի կ'ըսուի, եւ այն Ս. Եկեղեցւոյն գլուխը
Քրիստոս է, եւ Հոգւոյն սրբոյ առաջնորդութեամբը կ'առաջ-
նորդուի եւ միւսն է ցկատարած պիտի չդադրի եւ չպիտի պակ-
սի եւ ամենեւին սխալած չէ եւ հնար չէ որ սխալի, եւ ամե-
նեւին անանկ ճշմարտութիւն մը չկայ՝ որ Ս. Գրոց մէջ զըր-
ւած ըլլայ ու Ս. Եկեղեցին զիտցած չըլլայ:

3. Խոստովանի՞ս եւ ընդունի՞ս եկեղեցւոյ եօթն խոր-
հուրդները՝ որք են Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն,
Հաղորդութիւն, Ձեռնադրութիւն, Պսակ եւ Վերջին Օծում:
Եւ եթէ այս խորհուրդները որ եւ իցէ քրիստոնեայ չկրնար
տալ, այլ օրինաւոր ձեռնադրութեամբ կաթողիկոս, եպիսկո-
պոս եւ քահանայ ըլլալու է որ անոնք միայն իշխանութիւն
ունին տալու, եւ այն իշխանութիւնը Քրիստոսէ առած են ի-
րենց ձեռնադրողին միջնորդութեամբը:

7) Իսթիմեան, Ծագումն եւ Ընթացք..., էջ 154:

4. Խոստովանի՞ւս եւ ընդունի՞ւս, որ մարդ մը յաւիտեանական փրկութիւն ժառանգելու համար մկրտուելու է, եւ չմկրտուողը եկեղեցիէն դուրս է, եւ փրկութիւն չունի. թէ՛ եւ ամենեւին մեղք մը գործած չըլլայ, նոյնպէս մինչեւ որ իր գործած մեղքերը քահանային առջեւ ամէն մէկ պարագաներովը եւ կատարեալ զղջումով շոստովանի եւ քահանային դրած ապաշխարանքին յանձնառու չըլլայ նէ, ամենեւին մեղացը թողութիւն եւ արձակում չկրնար ունենալ. եւ յաւիտենական փառաց արժանի չըլլար: Չէ՛ թէ որ խոստովանած ըլլայ եւ ապաշխարանքը չկատարած իքէն կամ յետ խոստովանութեան թեթեւ եւ ախամայ մեղքով մը մեռնի ալ նէ, անանկներուն հոգին՝ Ս. Եկեղեցւոյ աղօթքովն ու անմահ պատարագաւ եւ յատուկ ողորմութիւնով կը մաքրուի, եւ յաւիտենական փառաց արժանի կ'ըլլայ:

5. Խոստովանի՞ւս եւ ընդունի՞ւս, որ Ս. Հազորդութեան Խորհուրդը Յիսուս Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւնն է, եւ ո՛վ որ այս հաւատքով չհաղորդուի ո՛ր անիկա յաւիտեմական դատապարտութեան մէջ է:

6. Խոստովանի՞ւս եւ ընդունի՞ւս, որ Ս. Կոյս Մարիամ Քրիստոս Աստուած ծնանելով, Աստուածածին է, եւ թէ՛ ծնանելու ատենը թէ՛ ծնանելէն ետքը կուսութիւնը անխախտ մնաց, միշտ կոյս է, եւ ամէն սուրբերէն վեր պատուելու արժանի է: Նոյնպէս Քրիստոսի Աստուածային արեամբը ներկուած Ս. խաչափայտը եւ ուրիշ Ս. եւ օծեալ խաչերն ալ անոր պատկերն ըլլալով երկրպագելի են: Նոյնպէս սրբոց բարեխօսութիւնը Աստուծոյ առջեւ ընդունելի է, եւ անոնց մատուցները եւ օծեալ պատկերները յարգութեան արժանաւոր են: Եւ Աստուած՝ թէ՛ Ս. Խաչին եւ թէ՛ Սրբոց մատուցներուն միջնորդութեամբը միշտ հրաշքներ կը գործէ:

7. Խոստովանի՞ւս եւ ընդունի՞ւս որ եկեղեցիի հաւատալ ըսելը՝ Քրիստոսի ընդհանրական Ս. եկեղեցւոյն միաբան հաւատացած բաներուն եւ անոր հաւատացածին պէս հաւատալ ըսել է, եւ դուն ալ նոյն մտքով Ս. եկեղեցւոյն կը հաւատա՞ս եւ եկեղեցւոյ Աստուածապաշտութեան արտաքին արարողութիւնները եւ քրիստոնէական ծէսերը եւ բոլոր պատուիրանները՝ Ս. առաքեալներէն եւ անոնց հետեւող Ս. Հայրապետներէն աւանդուած ըլլալով՝ կը յարգե՞ս եւ կատարելու ու պահելու յանձնառու կ'ըլլա՞ս:

8. Խոստովանի՞ւս եւ ընդունի՞ւս որ Ս. Եկեղեցւոյ մէջ իրարմէ տարբեր պաշտօնէի եւ իրարմէ վեր իշխանութեան

կարգեր կան. դպրութիւն, սարկաւագութիւն, քահանայութիւն, եպիսկոպոսութիւն, պատրիարքութիւն, եւ կաթողիկոսութիւն, եւ ամէն ազգի պատրիարքներն ու կաթողիկոսները Քրիստոսի փոխանորդներն են Ս. եկեղեցին հովուելու եւ բարեկարգութեան մէջ կառավարելու. բայց այս հովուներուն մէկուն վարքը թէ որ դէշ ըլլայ, անոր կառավարած եկեղեցին հաւատոյ մէջ սխալած չըլլար ամենեւին եւ ընդհանուր եկեղեցւոյ արատ մը չզար:

9. Կը նզովե՞ս եւ կը հրաժարե՞ս այն մարդէն եւ այն ընկերութենէն, որ կը քարոզէ թէ ընդհանուր եկեղեցւոյ միաբան ընդունած հաւատքին մէջ մոլորութիւն մտած է, եւ Ս. Հոգին ինձի այսպէս հասկցուց ըսելով Ս. Գրոց միտքը եկեղեցւոյն սորվեցուցածէն օտար կերպով կը բացատրէ, եւ իրեն թելադրող մոլորութեան հոգին իբրեւ Ս. Հոգին Աստուած կը խոստովանի եւ անոր հաւատքով՝ Ս. Աստուածածնի Քրիստոսածին կ'ըսէ, եւ միշտ կոյս ըլլալը կ'ուրանայ, եւ Ս. Խաչին երկրպագութիւն ընելը եւ Սրբոց մասունքներն ու օծուած պատկերները յարգելը եւ սուրբերը առ Աստուած բարեխօս բռնելը կոսպաշտութիւն համարելով՝ Քրիստոսի Ս. Եկեղեցին կոսպաշտ կը համարէ, եւ անոր Աստուածպատութեան արարողութիւնները եւ պատուիրանքները բոլորը իբրեւ աւելորդապաշտութիւն կը մերժէ, Աստուծոյ հրաշք գործելը չընդունելով՝ Անոր անհուն զօրութեանը չափ կը դնէ: Ասանկ մոլորութեան հետեւողները իբրեւ ամբարիշտ եւ Հոգւոյն Սրբոյ հայհոյիչ եւ թշնամի Աստուծոյ եւ ամենայն սրբոց նորա կը մերժե՞ս եւ կը նզովե՞ս եւ կը հրաժարիս բոլորէն: (Բովար ընդգծումները մերն են – Պ. Ն. Ա.)» (8)

Անշուշտ նկատելի է Մատթէոս Պատրիարքի այս հանգանակին մէջ կաթողիկէ վարդապետութեան ազդեցութիւնը: «Մատթէոսի գրուածոց մէջ», իրաւամբ դիտել կու տայ Մելիքսէդ վրդ. Մուրատեան, «խիստ շատ հակասութիւններ կան, որ կամելով Հայաստանեայց Եկեղեցին պաշտպանել բողոքականութեան դէմ՝ տեղ տեղ բոլորովին անգիտաբար խորասուզուած է պապականութեան մէջ:» (9)

8) Իւրիմեան, Ծագումն եւ Ընթացք..., էջ 156:

9) Մելիքսէդ վրդ. Մուրատեան, Պատմութիւն Հայաստանեայց Աւագերկան Սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ 1872, էջ 616-617:

Ասոր իբրև հակազդեցութիւն, նորակազմ «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին» հրատարակեց զբնօրինակ մը՝ Մխիթարութեան ներշնչումով, ուր ի միջի այլոց ներկայացուցեցաւ վարդապետական հանգանակ մը, զոր ստորագրելու էին անոնք, որոնք կ'ուզէին միանալ այս նոր եկեղեցիին: Հետեւեալ տասներկու կէտերը կը պարզեն Աւետարանական հաւատքի վարդապետութիւնը:

1. Կը հաւատա՞ս միակ կենդանի ու նշմարիտ Աստուծոյ գոյութեան, որ Ստեղծիչ, Պահպանիչ եւ Կառավարիչ է Տիեզերքի. ամենախարոզ, ամենագէտ, ամենուրեք, իմեացոյ, անկախ, անփոփոխելի. տէր է անհուն բարութեան, իմաստութեան, սրբութեան, արդարութեան, ողորմութեան եւ նշմարութեան, մասն պաշտամունքի միակ առարկան:

2. Կը հաւատա՞ս որ Աստուած գոյ է երեք անձնաւորութիւններով, Հայրը, Որդին, եւ Սուրբ Հոգին, եւ թէ այս բոլորը մէկ Աստուած են:

3. Կը հաւատա՞ս թէ Հին եւ Նոր Կտակարաններու սուրբ գիրքերը Աստուծոյ մերշնչումով գրուած են, ու իր կամքին յայտնութիւնն են մարդուն, ու բաւարար եւ միակ կանոնն են հաւատքի ու կեանքի:

4. Կը հաւատա՞ս թէ մարդկային սեռը իր բնական վիճակին մէջ գուրկ է սրբութենէ ու ամբողջովին ապականած ու արժանի աստուածային արդար գայրոյթին:

5. Կը հաւատա՞ս թէ Տէր Յիսուս Քրիստոս կատարեալ Աստուած ու կատարեալ մարդ է, մեղաւորներու միակ Փրկիչը, եւ միակ միջնորդն ու բարեխօսը Աստուծոյ եւ մարդուն միջեւ: Թէ Անիկա, իր կատարեալ հնազանդութիւնով, տառապանքով ու մահով մեղքի համար կատարեալ քաւութիւնն ըրաւ, այնպէս որ, ամէն ով որ հաւատայ իրեն՝ վստահաբար պիտի փրկուի, եւ թէ ուրիշ ոչ մէկ զոհ կայ մեղքի համար:

6. Կը հաւատա՞ս թէ մարդուն բացարձակ անօրէնութեան իբր հետեւանք, անհրաժեշտ է որ բոլոր մարդիկ վերստին ծնին Սուրբ Հոգիին զօրութիւնով, որպէսզի փրկուին:

7. Կը հաւատա՞ս թէ մենք կ'արդարանանք միայն Քրիստոսի արդարութիւնով՝ հաւատքով եւ ոչ թէ ծոմապահութեամբ, բարեգործութեամբ, ապաշխարանքով եւ կամ մեր ուրիշ գործերով: Նաեւ՝ մինչ բարի գործերը անբաժանելի են իրական հաւատքէն, անոնք երբեք փրկազործական առաքելութիւն չեն սեպուիր Աստուծոյ առջեւ:

8. Կը հաւատա՞ս թէ սրբութեան կեանքը, ու մեր ունեցած զանազան պարտականութեանց խղճամիտ կատարումը՝ Աստուծոյ, մարդոց եւ մեր անձերուն հանդէպ, ոչ միայն տեւապէս անհրաժեշտ է բոլոր հաւատացեալներու համար, հապա մաքրեալ կան է քրիստոնէական նկարագրի համար:

9. Կը հաւատա՞ս թէ Աստուծոյ զատ ոչ մէկ էակ պէտք է պաշտուի կամ երկրպագութեան արժանանայ, եւ թէ Սուրբ Երրորդութեան իւրաքանչիւր անձը արժանի է մեր պաշտումին, որ ընդունելի ըլլալու համար պէտք է գործադրուի ուրիշ ոչ մէկ միջնորդէ՝ ըստ միայն Յիսուս Քրիստոսի միջնորդելու թէ գործածութիւնը մասունքներու, պատկերներու, խաչներու եւ որեւէ տեսակ պատկերներու՝ որեւէ պաշամունքի տեսնելու, նաեւ սուրբերու բարեխօսութիւնը հակառակ է սուրբ դրոց ու խիստ անհաճոյ՝ Աստուծոյ. նաեւ մեռելախնայ համար աղօթելը չէ արտօնուած Աստուծոյ խօսքին մէջ:

10. Կը հաւատա՞ս թէ մեռելներու յարութիւն կայ՝ թէ՛ արդարիւն, թէ՛ ալ մեղաւորիւն, մաքրութիւն վերջին դատաստան: Եւ թէ՛ ուրախութիւն կայ արդարիւն ու պատիժ՝ չարիւն, որ կը սկսին մեռելներու ու կը շարունակուի յաւիտեանապէս:

11. Կը հաւատա՞ս թէ հաւատացեալներ՝ ինչ ալ ըլլայ տնոց թիւը, երբ կազմակերպուին, կը կազմեն Քրիստոսի եկեղեցի մը, որուն միակ Գլուխը Քրիստոս ինք է: Նաեւ՝ Քրիստոսի եկեղեցիին Սուրհուրդներն են միայն Մկրտութիւն եւ Հաղորդութիւն, առաջինը իրրեւ ուխտին կնիքը, նաեւ նշան մը Ս. Հոգիին մաքրարար գործունէութեան, ու ապացոյցը անձին տեսանելի եկեղեցիին միանալուն, խոսք երկրորդը՝ տեսանելի խորհրդանշան մը Քրիստոսի մահուան, անոր յաւերժական քաջարար սիրոյն, եւ ուխտ մը՝ միացման եւ հաղորդակցութեան անոր եւ բոլոր ճշմարիտ հաւատացեալներու հետ:

12. Կը հաւատա՞ս թէ Աւետարանը՝ Քրիստոսի կողմէ նշանակուած էական միջոցն է մարդոց փրկութեան, ու իր ժողովուրդին հոգեւոր դաստիարակութեան համար. թէ՛ Եկեղեցիին պարտականութիւնն է գործադրել Փրկիչին պատուէրը. — «Գացե՛ք ամբողջ աշխարհը ու քարոզե՛ք աւետարանը ամէն արարածի (Բոլոր ընդդժմները մերն են — Պ. Ն. Տ.)»:» (10)

Աշալուրջ ընթերցողի մը համար շատ դժուար պիտի չըլլայ դատորոշել վարդապետական կամ աստուածաբանական այն տարբերութիւնները, որոնք երեւան կու գան իրարու հակադրուած այս հանդանակներուն մէջ: Եկեղեցական պատմութեան մէջ հաւատոյ հանդանակներու բանաձևուածի պարագաները պաշտպանողական քայլեր եղած են հերետիկոսութեան կամ սխալ վարդապետութիւններու դէմ: Ինչպէս նշեցինք, այսպիսի պայմաններու մէջ յաճախ անխուսափելի կը դառնայ՝ երկու կողմերուն համար՝ անսեղիտալի կարծրութիւնը: Ահա թէ ինչո՞ւ Մատթէոս Պատրիարքին հանդանակին մէջ կը գտնենք շեշտուած աւանդապաշտութիւն, իսկ Աւետարանական հանդանակին մէջ՝ շեշտուած դրապաշտութիւն եւ խոտակրօնութիւն: Մինչ մէկ կողմէն Մատթէոս Պատրիարք արդարաւայի մտափախութեամբ պատնէշ կը կանգնէ Բողոքական ազատականութեան դէմ, անդին՝ միսիոնարներէ ներշնչուած եւ բուն նախանձաւորութեամբ լեցուած՝ քանի մը Հայ Աւետարանական առաջնորդներ վարդապետական պարիսպներ կը բարձրացնեն նորակազմ եկեղեցիին շուրջը:

Առանց դատապարտելու կողմերէն մէկը կամ միւսը, ջանանք վեր առնել այն հիմնական սկզբունքները, որոնց տրամաբանական հետեւողութիւնը ծնունդ տուած է Հայ Աւետարանական առանձնայատկութիւններուն: Այս պարագային, մեր քննարկումին երկու բեւեռները կը կազմեն Մատթէոս Պատրիարքի հրապարակած հանդանակը եւ Աւետարանական հանդանակը:

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՈՐՈՆՔ ԾՆՈՒՆԴ
ՏՈՒԱԾ ԵՆ ՀԱՅ ԱՒԵՏ. ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ԱՒԵՏԱՐԱՆԸ ԻԲՐԵՒ ԳԵՐԱԳՈՅՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Աւետարանական եկեղեցիի հրապարակած հանդանակին երրորդ կէտը կը հաստատէ թէ Աստուածաշունչը Աստուծոյ «կամֆին յայտնութիւնն է մարդուն ու բաւարար եւ միակ կանոնն է հաւատքի եւ կեանքի»: Ասով հանդանակը բանաձևողներ կը ժխտեն եկեղեցիին ու անոր աւանդութիւններուն հեղինակութիւնը: Ուրիշ խօսքով, դաւանանքի կամ վարդապետութեան ուղիղ կամ սխալ ըլլալը որոշող հեղինակութիւնը Աւետարանն է, Յիսուս Քրիստոսի եւ առաքեալներուն ուսուցումներն են եւ ոչ թէ ընդհանրական ժողովներու բանաձևած հանդանակները, կամ դարերու ընթացքին ու յարափոփոխ պայմաններու ներքեւ եւ յաճախ պարտադրարար ընդունուած աւանդութիւնները:

Հայ Աւետ. Եկեղեցիի այս սկզբունքը թումբ կը կանգնէ Մատթէոս Պատրիարքին այն յաւակնութեան դէմ՝ որուն համաձայն եկեղեցին «ամենեւին սխալած չէ եւ հնար չէ որ սխալի, եւ ամենեւին ամանկ նշմարտութիւն մը չկայ որ Ս. Գրոց մէջ գրուած ըլլայ ու Ս. Եկեղեցին գիտցած չըլլայ» (Տես՝ Մատթէոս պատրիարքի Հանդանակին յօդ. 2-ը) :

Կրնայ անմիջապէս մէջտեղ դրուիլ Մայր Եկեղեցիին կողմէ Եօթը Պորհուրդներու ընդունման պարագաները : Օրմանեան Պատրիարք կ'ընդունի թէ Առաքելական Եկեղեցին առաջին անգամ լատին քարոզիչներէն լսած է այդ մասին, թէ՛ ժԲ. դարու կիսուն մասնաւոր ճիշդ թափուած է Եօթը Պորհուրդներու վարդապետութիւնը պարտադրել բոլորին : (11) Իսկ Բարզէն Կաթողիկոս կը խոստովանի թէ «Ուղղակի Տէր Յիսուս-Քրիստոսէ Հաստատուած խորհուրդները երկու են. Հաղորդութիւն եւ Մկրտութիւն : Մնացած հինգը յետոյ աւելցած են այդ երկուքին վրայ» : (12) Կարելի է Հարցնել թէ Եկեղեցին այս վարդապետութիւնը ընդունելէ՞ առաջ սխալի մէջ էր թէ ոչ ընդունելէ ետք սխալի մէջ ինկաւ :

Ալ չիօսինք այսպէս կոչուած Տիեզերական Ժողովներու ընթացքին պատրաստուած Հանդանակներու մասին, ուր յաճախ պետական իշխանութիւններու ուղղակի միջամտութեամբ եւ կամ Աթոռի տիրանալու հեռանկարով ինչ ինչ վարդապետութիւններ փոփոխութիւններ կրած են :

Երբ ընդունուի Աւետարանի Գերագոյն Հեղինակութիւնը, անկասկած փուլ կու գայ կղերապետութիւնն ու նուիրապետութիւնը, ինչպէս նաեւ Առաքելական Յաջորդականութեան վարկածը, իրենց տեղը տալու քոյր հաւատացեալներու քահանայութեան ըմբռնումին : Կը մերժուին նաեւ այն բոլոր վարդապետութիւններն ու աւանդութիւնները, որոնք ընդհանրապէս ընկերարանական, քաղաքական, դիտական եւ մշակութային ըմբռնումներու եւ պայմաններու արտադրութիւնը եղած են :

Աւետարանի Գերագոյն Հեղինակութեան ճանաչումը մղած է Հայ Աւետ. Եկեղեցին որ կեդրոնական տեղ տայ իր պաշտամունքին մէջ Աւետարանի քարոզութեան, ու ասիկա՝ Ժողովուրդին հասկցած լեզուով : Նաեւ, Ժողովուրդին ձեռքը տայ Աստուածաչունչը, որ թարգմանուած է Ժողովրդային Հայերէնի, ու հասկնալի դարձած բոլորին :

11) Օրմանեան, Հայոց Եկեղեցին, էջ 104 :

12) Բարզէն Կաթողիկոս, Քրիստոնէական, էջ 109 :

Կ'արժէ հոս երկու մէջը երուամբը ընել հայ եկեղեցիի տիտան-
ներէն՝ Գրիգոր Լուսաւորիչէ եւ Գրիգոր Նարեկացիէ :

«Պիտոյ է մեզ միշտ դաստիարակութիւն Աւետարանին»,
կ'ըսէ Լուսաւորիչ, «ի հրահանգել զմեզ ի լուսաւորութեան
կարգս, գյամնանմանալք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն մշմար-
տութեան, անեսցուք զվաստակս արդարութեան սուրբ սրտի
եւ ուղղափառ հաւատով յԱստուած :

«Վասն այսորիկ դադարեսցուք ի դատարկ եւ ի վայրա-
պար քննութենէ, եւ զհետ երթիցուք զխրատուց գրոց սրբոց
հնոյն եւ նորոյն, զի ես եմ ասէ Աստուած եւ չիք այլոք որ
պատմէ զիրաւունս զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք, նմա
լուիցուք որ փրկէ զմեզ յամենայն վտանգից եւ փոխէ արքա-
յութիւնն երկնից» : (13)

Իսկ Նարեկացին այսպէս կ'աղօթէ —

Շնորհ արա՛ մաեւ ինձ՝ մեղաւորիս, որ ես էլ խօսեմ հա-
մարձակութեամբ

Կենդանարար խորհուրդն աւետեաց Աւետարանիդ,
Արագաթ-ոռիչ մտքի ընթացքով անցնելով անհուն ասպա-
րէզներով

Քեզմից ներշնչուած կտակարանների :

Եւ երբ ձեռնարկեմ ես հանդիսաւոր մեկնաբանութեան՝
Հասնի՛ր թող որ քո գրութիւնը նախ, իր ժամանակին
ներշնչելով ինձ՝

Քեզ արժանիւն, պիտանին եւ հանելին՝

Քո աստուածութեան փառքի գովեստի,

Ինչպէս նաեւ Կաթուղիկէ Նկեղեցու կատարեալ շինու-
թեան համար : (14)

**ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՍԿՉՔՈՒՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՁԻՆ
ԲԱՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ Է՛ ՄԱՐԴՈՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Դարձեալ յիշենք թէ այս սկզբունքը կամ վարդապետութիւնը
մենաշնորհը չէ Աւետարանական Եկեղեցիին, հապա քրիստոնեայ
բոլոր եկեղեցիները կը դաւանին եւ կ'ուսուցանեն այս ճշմարտու-

13) Գրիգոր Լուսաւորիչ, «Յանճախապատում եւ ճառք», Վեներիկ 1838,
էջ 6 :

14) Գրիգոր Նարեկացի, Մատեն Ողբերգութեան (թրգ. Մ. Խերամեան),
Երևան 1980, էջ 151 :

թիւնը: Այսուհանդերձ, Աւետարանական եկեղեցին բացարձակապէս աստիճանի վրայ գրած է Քրիստոսի անձին բաւարարութիւնը՝ մարդուն փրկութեան ի խնդիր: Ուրիշ խօսքով, Աւետարանական եկեղեցին այսպէս կոչուած փրկչակիցներ չի ճանչնար: Այս կէտին շուրջ ոչ մէկ իրաւախոհութիւն կ'ընդունի, քանի որ մեծ վստահութիւն ունի Աւետարանի տուած հաւաստիքներուն. «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Ուղին տուաւ, որպէսզի ամէն ով որ հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտեանական կեանք ունենայ:» (15) Իսկ Պօղոս Առաքեալի բերնով արուած հրահանգը՝ յուսահատութեան մատնուած ու անճանապահութիւն ընկրու վրայ եղող բնտարակտին դասական պատուէր մըն է, նաեւ վկայութիւն՝ Քրիստոսով ընդունուելիք փրկութեան. «Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի, ու պիտի փրկուիս դուն եւ քու տունդ:» (16) Կարելի է նոր Կտակարանէն բազմաթիւ հատուածներ մէջբերել այս ճշմարտութիւնը ապացուցանող:

Այսպիսի փրկագործութեան համար Աւետարանական վարդապետութիւնը ոչ մէկ միջնորդ կամ դորձակատար կը ճանչնայ: Նոր Կտակարանի մէջ ոչ մէկ հատուածի կարելի է հանդիպել, ուր Յիսուսի մայրը՝ Մարիամ՝ միջնորդ դասնայ մեղքերու թողութեան համար: Ո՛չ մէկ տեղ կը հանդիպինք «Աստուածածին» (Թիէօթոֆոս) ախոռսին, որ արուած ըլլայ այլապէս առաքինազարդ ու Սուրբ Հոլիին շնորհքին արժանացած Ս. Կոյսին: Ինչպէս եկեղեցական կարգ մը վարդապետութիւններ, «Աստուածածին»ի վարդապետութիւնն ալ ծնունդ առաւ բարեպաշտութեան եւ յարգանքի պարզ մէկ արտայայտութենէն Բ.-Գ. դարերու ընթացքին, սակայն անհրաժեշտ դարձաւ վարդապետութեան վերածել զայն, երբ Քրիստոսի բնութեան շուրջ վէճերը սաստկացան եւ Կիւրեղ Աղեքսանդրացին յաղթանակ տարաւ Նեստորի վրայ: Այս վերջինը առաջարկեց «Քրիստոսածին» կոչել Մարիամը, սակայն տրուած ըլլալով որ այսպիսի յորջորջում մը Յիսուսի մարդկային բնութիւնը մասամբ բաժնած պիտի ըլլար աստուածային բնութենէն, Կիւրեղ՝ Եփեսոսի Ժողովին մէջ (431 թ.) պայքարեցաւ անոր դէմ: Ուրեմն՝ Քաղկեդոնի Ժողովին մէջ (451 թ.) «Աստուածածին»ի վարդապետութիւնը հաստատուեցաւ: (17) Ժամանակի ընթացքին, «Աստուածա-

15) Աւետ. Ըստ Յովհաննու, Գլուխ Գ., հմբ. 16:

16) Գործք Առք., ԺԶ. 31:

17) F. L. Cross, (Ed.) *The Oxford Dictionary of the Christian Church*, London, Oxford Univ. Press, 1958, p. 1346.

ծին»ին տրուեցան դերընական բաղձաթիւ արժանիքներ եւ պաշտօններ, որոնք պատմական ոչ մէկ հիմք ունենալով հանդերձ, տրամարանական հետեւողութիւնները եղան «Աստուածածին» ասութեան :

Աւետարանական վարդապետութիւնը, ընդունելով հանդերձ Մարիամին առաքինապարզ եւ շնորհընկալ կոյս մը ըլլալը, կը նկատէ զայն ա'յն ինչ որ արձանապրուած է Աւետարանին մէջ — «Ու հրեշտակը անոր վալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, ով շնորհընկալ կոյս, Տէրը քեզի հետ է. դուն կանանց մէջ օրհնեալ ես :» (18)

Աւետարանական վարդապետութիւնը նոյն սկզբունքէն մեկնելով, կը մերժէ նաեւ բոլոր սուրբերուն, ի միջի այլոց կղերականութեան «մենաշնորհներ»ը մեղքերու թողութիւն տալու եւ կամ միջնորդ ու բարեխօս դառնալու մարդոց եւ Աստուծոյ միջեւ : Աւետարանական վարդապետութիւնը կը մերժէ էսօթերիսիզմը ու կը նկատէ զայն հեթանոսական ազդեցութիւն մը քրիստոնեայ եկեղեցիին վրայ, որուն խիստ տխուր եւ ծանրակշիռ հետեւանքները արատաւորած են Քրիստոսի Մարմինը ըլլալու կոչուած Եկեղեցիին դիմագիծը : Ահա՛ Պօղոս Առաքեալի վկայութիւնը Քրիստոսի եւ իր պաշտօնին մասին —

«Վասնզի այն է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն անջեւ, որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին ու նշմարտութիւնը նանչնալու գան : Քանզի մէկ Աստուած կայ, ու մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջտեղ, Քրիստոս Յիսուս մարդը, որ իր անձը ամէնուն տեղ փրկանք տուաւ՝ իր ատենին վկայութիւնն ըլլալու, որու ես քարոզիչ ու առաքեալ դրուեցայ, (նշմարիտ կ'ըսեմ Քրիստոսով սուտ չեմ խօսիր,) հեթանոսներուն վարդապետ եղայ հաւատով ու նշմարտութիւնով :» (19)

ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԾՆՈՐՀՔՆ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՒԱՏԱՑՈՂ ԻՒՐԱՆՁԻՒՐ ՄԵՂԱԻՈՐԻՆ

Ասիկա հիմնական երրորդ սկզբունքն է Աւետարանական վարդապետութեան : Տարակոյս չկայ որ Հայց. Եկեղեցիի մեծանուն աստուածաբաններ խօսած ու դրած են թէ փրկութիւնը հաւատքով ստացուած Աստուծոյ շնորհն է : Կարելի է բաղձաթիւ վկայութիւններ մէջբերել հոս Գրիգոր Լուսաւորիչէ, Գրիգոր Նաբեկացիէ, Գրիգոր Տաթեւացիէ, Ներսէս Ծնորհալիէ, որոնք հաւատ-

18) Աւետ. Ըստ Ղուկասու Ա. 28 :

19) Ա. Թղթ. Պօղոսի Առաք. մ առ Տիմ., Բ. 3-7 :

քով փրկութեան մասին դրած են եւ խօսած: Սակայն անոնք միա-
ժամանակ յիշած են եկեղեցիին Պորհուրդներուն անհրաժեշտութիւ-
նը՝ մեղքերու փրկութեան համար:

Մտաթէոս Պատրիարքի «նոր Դաւանադիր»ը բացարձակու-
թեան աստիճանին դրաւ Պորհուրդներու դերը: Օրինակ, մէկը ա-
ռանց մկրտուելու չի կրնար յաւիտենական փրկութեան տիրանալ:
Առանց իր մեղքերը քահանային խոստովանելու, որոշուած ապաշ-
խարանքը կատարելու եւ քահանային կողմէ մեղքերու թողութիւն
ստանալու չի կրնար փրկուիլ: Միւս կողմէն սակայն, մեղաւորը իր
մահուրնէ ետք իսկ կրնայ փրկուիլ, եթէ եկեղեցին (կղերականու-
թիւնը) պատարագ մատուցանէ, նաեւ յատուկ աղաքմութիւն կա-
տարուի վախճանեակին յիշատակին (Տես՝ յօդ. 4): Ինչպէս կը հե-
տեւցուի, մարդ-միջնորդի դերը՝ Պորհուրդներու մատակարարման
ճամբով՝ այնքան շեշտուած է որ Քրիստոսի շնորհքով փրկութեան
հաւատքը նսեմացուած է չքանալու աստիճան:

Հայ Աւետարանական վարդապետութիւնը փրկութեան հար-
ցին շուրջ ունի դաւանական ուժգնութիւն, այսինքն, երբ մեղաւո-
րը սրտով զղջայ ու բերնով խոստովանի ու ներում խնդրէ Աստուծ-
մէ, փրկութեան անհրաժեշտ պայմանները գործադրած կ'ըլլայ:
Աւելի շեշտակի ընելու համար մեր հաստատումը, յայտնենք թէ
մեղաւորը փրկուելու համար պէտք չունի ո՛չ մկրտութեան եւ ո՛չ ալ
հաղորդութեան, որով, եթէ ամբողջացնէ ան վերի պայմանը - հա-
ւատալ Քրիստոսի փրկարար շնորհքին ու խոստովանելով դարձի
դալ - ու մեռնի նոյնիսկ առանց բարի գործ մը ընելու առիթը ու-
նենալու, անոր փրկութիւնը իրագործուած կ'ըլլայ: Այս վարդա-
պետութեան ծնունդ տուող դաւանութիւնը այն է թէ՛ Աստուած
ինք նախաձեռնարկ եղած է մեղաւորին փրկութեան նկատմամբ, ու
տակաւին ի՛ր նախաձեռնութիւնն է որ կարելի կը դարձնէ մեղաւո-
րին դարձի դալը: Իսկ փրկութեան կեանքը կը զարգանայ, կը ճո-
խանայ եւ կը զօրանայ՝ ինչպէս անհատական աղօթքով եւ Աս-
տուծոյ Ոսօքին սերտողութիւնով, բայց նաեւ եկեղեցական ու հա-
ւաքական պաշտամունքով, եւ աւետարանչական գործօն ծառայու-
թիւնով:

ԲՈՂՈՐ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ
ԶՈՐՐՈՐԴ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆ Է
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Այս սկզբունքը հիմնական երկու հարցեր կը յարուցանէ՝ ե-
կեղեցիի եւ եկեղեցականի շուրջ: Ի՞նչ է եկեղեցին ու ո՞վ է եկեղե-
ցականը:

ա) «Եկեղեցին» (Յունարէն՝ Եկլիզիա) կը նշանակէ «ժողովք», «հաւաքոյթ»: Հին Յոյները կը գործածէին այս բառը իրենց «քաղաքի» (քաղաք) տարեկան ժողովքին համար, ուր կը հաւաքուէր ամբողջ ժողովուրդը ու կը լսէր քաղաք – պետութիւնը շահագրգռող հարցերու շուրջ: Այս առիթով կը կատարուէին նաեւ հեթանոսական աղօթքներ եւ պաշտամունք: Սակայն անպայման կրօնական գործածութիւն չունէր բառը: Քրիստոնէութիւնը ընդունելէ ետք, Յոյներ «քրիստոնէացուցին» բառը, որ ժամանակի ընթացքին ենթարկուեցաւ բազմաթիւ փոփոխութիւններու:

Աւետարանի իմաստով, եկեղեցին հաւատացեալներու ժողովքն է, որուն Գլուխը Քրիստոս Ինքն է: Այսինքն, հաւաքուողներ Քրիստոսի անունով եւ Քրիստոսը պաշտելու եւ Անոր հնազանդելու համար կը հաւաքուին: Եկեղեցին հնազանդելով իր Տիրոջ պատուէրին, Փրկութեան Աւետարանը կը յայտարարէ եւ կը սորվեցնէ, սակայն Եկեղեցին ինք փրկիչ չէ այն իմաստով որ Քրիստոս է: Եկեղեցին կարգ մը արարողութիւններ կը կատարէ որպէսզի անոնցմով դիւրամբունելի դարձնէ Քրիստոսի փրկագործութիւնը, նաեւ անոնցմով յիշէ իր Տէրը եւ ներշնչուի Անոր կեանքով: Այդ արարողութիւնները (Որհուրդները՝ ըստ Հայց. Եկեղեցիի) կը կատարուէին իբրեւ միջոց ճշմարտութիւն մը փոխանցելու, սակայն ժամանակի ընթացքին անոնք դարձան նպատակ՝ նոյնիսկ փրկութեան համար անհրաժեշտութիւն (Տես՝ Մատթէոս Պատրիարքի «Նոր Դաւանագիր»ը, յօդ. 4):

Մկրտութիւնը եւ Հաղորդութիւնը՝ Աւետարանական ըմբռնումի համաձայն՝ մեղքերու թողութիւն տալու մեքենական զօրութիւնը չունին: Հապա անոնք արտաքին ձեւակերպութիւններ են՝ հոգեկան ու էական հաղորդակցութիւն ցուցանող Քրիստոս Յիսուսի հետ: Մկրտութիւնով մանուկը կամ չափահասը մաս կը կազմէ եկեղեցիին իբրեւ աստուածային այդ ընտանիքին մէկ զաւակը: Եկեղեցի եւ ծնողք պարտականութիւն կը ստանձնեն հաւատքը ուսուցանել նորեկին ու զայն հոգեւորապէս զարգացնել: Սուրբ Հոլին Ինք կը գործէ նորընծային, ծնողքին եւ հաւատացեալներու խումբին մէջ, որպէսզի այս նուիրական առաջադրութիւնը իրականանայ ենթակային կեանքին մէջ: Իսկ Հաղորդութիւնը՝ Քրիստոսի պատուէրին համաձայն կատարուող յիշատակի հոգեւոր խնճոյք մըն է, որուն մասնակցողը, Սուրբ Հոգիին ներգործութիւնով կը զգայ հաւատացեալներու միանականութիւնը Քրիստոս Յիսուսով, որ խորհրդանշական կերպով ներկայ է Հաղորդութեան Սեղանի հացին եւ գինիին մէջ: Հաւատացեալը հաղորդուելով հացով եւ գինիով՝

կը յիշէ Տէր Յիսուսը, որ իր մեղքերուն համար խաչուած է, արիւնը թափած, ու մեռնելէ ետք յարութիւն առած ու երկինք առնուած է: Սակայն Ան խոստում ունի վերստին դալու եւ աշխարհը դատելու՝ արդարնիրու յաւիտեանական կեանքի ու մեղաւորներու յաւիտեանական դատապարտութեան համար: Ահա ասոնք են այն «Սորհուրդ»-ները, որոնք կը պարզուին հաղորդութեան սեղանին շուրջ, ինչպէս նաեւ մկրտութեան արարողութիւնով:

բ) Եկեղեցականը ան է որ իր անձը նուիրած է եկեղեցիին նպատակը իրագործելու, ու առ այդ աստուածային կոչում զգացած է իր մէջ: Անիկա «սուրբ» է այն իմաստով որ Աստուծոյ կողմէ բնութաւած ու գտնուած է որոշ առաքելութեան համար, որ է քարոզել խաչեալ եւ յարուցեալ Քրիստոսը ու Անոյ միջոցով ստացուած՝ շնորհեով վերկուրելը: Անշուշտ ան կրնայ կրթական, ընկերային, բարեսիրական եւ այլ ծառայութիւններ մատուցանել ժողովուրդին, սակայն ասոնք կրնան միջոց ծառայել վերկուրեան նպատակին: Հետեւաբար, եթէ քարոզութենէ դուրս՝ միւս զործունէութիւնները արդէլք կը հանդիսանան իր առաքելութեան ուղիղ գործադրութեան եւ արդիւնաբերութեան, այդ պարագային եկեղեցականը շեղած կ'ըլլայ իր ստացած առաքելութենէն:

Աւետարանական վարդապետութիւնը չի հաւատար այսպէս կոչուած «Առաքելական յաջորդականութիւն»ի: Այսինքն, առաքեալներէն սկսած ու յաջորդներուն փոխանցուած կամ փոխանցելի մեքենական զօրութեան եւ հեղինակութեան գոյութեան: Ամէն պաշտօնեայ իր արժանիքը եւ առանձնաշնորհումը կը ստանայ Սուրբ Հոգիէն: Ձեռնադրութիւնը եւ օծումը արարողութիւններ են ոչ թէ նորընծային ոյժ փոխանցելու, հապա Սուրբ Հոգիէն կանչուած անձը եկեղեցիի մէջ որոշ ծառայութեան մէջ հաստատելու համար: Ձեռնադրող եկեղեցականներ հոգեւոր որոշ արժանիք եւ հեղինակութիւն չեն փոխանցեր թեկնածուին՝ ձեռնադրութիւնով եւ օծումով, հապա աղօթք ու մաղթանք կ'ընեն որ Սուրբ Հոգին ինք զօրացնէ զայն եւ ստացած պաշտօնին նկատմամբ պիտակցութիւն չնորհէ անոր:

Այս իմաստով, եկեղեցականը դասակարգ չէ, հապա դասակարգը հաւատացեալներու խումբն է: Իսկ եկեղեցականը՝ հաւատացեալներու մէջ հաւատացեալ մըն է, որ կոչումով եւ դաստիարակութիւնով ատակ է առաջնորդելու, քարոզելու, եւ ժողովուրդին հոգեւոր կարիքները պահանջելու:

Այս պաշտօնը կատարելու համար եկեղեցականը պէտք չունի ժողովուրդէն գատուելով առանձին դասակարգ մը հաստատելու:

Եկեղեցականը Քրիստոսի ծառան է, ու կը գործէ Քրիստոսի պատուէրով եւ պատասխանատու է Քրիստոսի: Սակայն կազմակերպչական գետնի վրայ կանոնաւորութիւն յառաջ բերելու համար անհրաժեշտ կը դառնայ զանազան պաշտօններու ստեղծումը, ամէն մարդու տրուած շնորհքին համաձայն: Ու քանի որ Քրիստոս է միակ միջնորդը փրկութեան համար, եւ Սուրբ Հոգին է փրկագործութիւնը յառաջ տանողը, հետեւաբար պէտք է մնար եկեղեցիին մէջ ուրիշ ո՛չ մէկ միջնորդի: Ահա այս իրողութենէն է որ կը հաստատուի բոլոր հաւատացեալներու քահանայութիւնը, այսինքն, ամէն հաւատացեալ ինք իր քահանան է՝ Քրիստոսի վրայ ունեցած իր հաւատքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սխալ է այն տեսակէտը թէ Հայ Աւետ. նախահայրեր վարդապետական այս տարբերութիւնները մեկնակէտ դարձուցին իրենց բարեկարգչական շարժումին: Իրողութիւնը այն է թէ նախ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի շրջանակին մէջ սկսաւ բարեպաշտական – բարեկարգչական շարժումը ու վարդապետական բանաձեւումներ հրապարակուեցան միայն այն ատեն երբ շարժումին ղեկավարները ամբաստանուեցան իրբեւ հերետիկոս կամ «խաբեբայ աղանդաւորներ»:

Հայ Աւետ. Շարժումին ծնունդն ու որպէս եկեղեցի կազմաւորումը ցոյց կու տան թէ Աստուածաշունչի ընթերցումով եւ հոգեւոր խանդավառութեամբ սկսուած բարեպաշտական – բարեկարգչական շարժումը ի վերջոյ ստիպուած պիտի ըլլար ճշդել իր դիրքը դաւանական–վարդապետական հարցերու շուրջ, որպէսզի զերծ մնար ամբաստանութիւններէ, նաեւ իր հետեւորդներուն առջեւ ուղի մը բացած ըլլար:

Ծնունդով բարեպաշտական ըլլալով մէկտեղ, Հայ Աւետ. Եկեղեցիի առանձնայատուկ վարդապետութիւնները չմնացին միայն աստուածաբանական եւ ակադեմական կալուածներու մէջ, հապաանոնք խոր անդրադարձ ունեցան հայ կիսնքի բոլոր մարզերուն մէջ:

Աւետարանական վարդապետութիւնները հայ ժողովուրդին մէջ յառաջ բերին յեղաշրջուած մերձեցում կրօնական հարցերու, յեղաշրջուած կենցաղ, յեղաշրջուած տեսիլք եւ նուիրում:

**THE PARTICULAR CHARACTERISTICS
OF THE ARMENIAN EVANGELICAL CHURCH**

BARKEV N. DARAKJIAN

After pointing out the direct and indirect causes of the formation of the Armenian Evangelical Church in the middle of the 19th century, the study presents the declaration of the First Armenian Protestants, the New Confession of Patriarch Matthew of Constantinople, and the Confession of Armenia's Evangelical Church in opposition to Patriarch Matthew's New Confession.

Comparing these last two Confessions, the author presents those principles which have given birth to the particular characteristics of the Armenian Evangelical Church, namely; to accept the Gospel as the highest authority; to accept Christ as the only mediator for salvation; salvation is the grace of God; and all believers are ministers of the church.